ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ս. ԳՅՈՉԱԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գյոզալյան

Ի պատասխան Ձեր 10.08.2021թ. գրության՝ տեղեկացվում է.

Արաբկիր վարչական շրջանի Քեռու փողոցի հ.66 հասցեին կից 454.0 քմ մակերեսով հողամասը Երևանի քաղաքապետի 2001 թվականի նոյեմբերի 6-ի հ.1383 և 2002 թվականի փետրվարի 18-ի հ.252 որոշումների համաձայն՝ 50 տարի ժամկետով տրամադրվել է քաղաքացի Լաուրա Ասլանյանին: Կատարված տեղատեսությամբ պարզվել է, որ հիշյալ հասցեում որևէ նոր քաղաքաշինական գործունեություն փաստացի չի իրականացվում, ուստի՝ բացակայում է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, նույն օրենսգրքով նախատեսված հոդվածների պահանջների շրջանակում համապատասխան արձանագրություն կազմելու հիմքը:

Նորաշեն հ.19, հ.20, հ.21 շենքերի հետնամասում ավտոտնակների կառուցման վերաբերյալ տեղեկացվում է, որ Աջափնյակ վարչական շրջանի 16-րդ թաղամասի հ.19 շենքի բակում՝ առանց հողօգտագործման իրավունքի և թույլտվության ավտոտնակների կառուցման շինարարական աշխատանքներ իրականացնելու փաստերի առնչությամբ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի պահանջների շրջանակում, քաղաքացիներ՝ Կարեն Հարությունյանի, Սաշիկ Մանուչարյանի և Արամ Պետրոսյանի նկատմամբ 27.10.2018թ. և 26.10.2018թ. կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ համապատասխանաբար հ.028743, հ.028744 և հ.028253 արձանագրությունները՝ վերջիններիս վարչական պատասխանատվության ենթարկելու համար, որոնց հիման վրա Երևանի քաղաքապետարանի 07.11.2018թ. հ.Վ-41/10, հ.Վ-41/11 և 14.11.2018թ. հ.Վ-42/26 որոշումներով, քաղաքացիներ՝ Կ.Հարությունյանի, Ս.Մանուչարյանի և Ա.Պետրոսյանի նկատմամբ նշանակվել են վարչական տույժեր՝ 400.000-ական ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ իրավական կարգավիճակ չունեցող հիշյալ շինությունների հետագա տնօրինման /օրինականացման կամ քանդման/ հարցը ենթակա է քննարկման ՀՀ կառավարության կողմից 18.05.2006թ. ընդունված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման շրջանակներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ